«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական

Առարկան ՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ ՝Սանդուխտ Նալբանդյան, Հերիքնազ Բաբաջանյան

Ուսումնական հաստատություն ՝Դաշտավանի Գերասիմ Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3-4

ԳԼՈՒԽ 1 ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ----------5-6

1.1 ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ-7-8

1.2 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ----------'-----8-11

1.3 ԽՈՍՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ----------11-12

1.4 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԵՎ ՁԵՎԵՐԸ----------13-15

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2.1 ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ----------16-19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------20-21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝

Մեր թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ սովորողների թե՛ բառապաշարի, թե՛ կապակցված խոսքի զարգացման գործընթացում առաջատար դեր ունի ընթերցանությունը: Ցավոք, այսօր գեղարվեստական խոսքի նկատմամբ սերնդի հետաքրքրությունը նվազել է: Երեխաները քիչ են կարդում. հատկապես կրտսեր դպրոցականների համար կարդալու հիմնական միջոցը դասագիրքն է: Այդ գործընթացի մեթոդապես ճիշտ կառուցումը սովորողների մեջ սեր և հետաքրքրություն է արթնացնում դեպի ընթերցանություն՝ գիրքը:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել տարրական դասարաններում սովորողների խոսքի զարգացման հիմնական խնդիրները և նրաց մեջ լեզվազգացողության արթնացման և մշակման, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ձևերը և մեթոդները: Մշակել, փորձարկել, բացահայտել այնպիսի հնարներ, որոնք կնպաստեն ընթերցանության միջոցով կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանը և կապակցված խոսքի զարգացմանը:

Մեր նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել հետազոտության թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն, դիտարկել հիմնական սկզբունքները:
- Կատարել տարրական դպրոցում մայրենիի դասի ունկնդրումներ, բացահայտել I-IV կապակցված խոսքի դժվարությունները, դիտարկել դրանց պատճառները և հաղթահարման ուղիները:
- Մշակել ընթերցանության միջոցով սովորողների կապակցված խոսքի դժվարությունների հաղթահարման արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:
- Ծանոթանալ կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման դժվարությունների հաղթահարման վերաբերյալ ուսուցիչների կարծիքներին :

Ուսումնասիրության նորույթը

Մեր մանկավարժական փորձով հիմնավորել ենք, որ աշակերտի խոսքի զարգացումը մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից է, և I-IV դասարանների մայրենիի ծրագրերում

ներկայացված սովորողների կապակցված խոսքի զարգացմանը միտված աշխատանքները միանգամայն իրագործելի են:

Թեմայի շուրջ մշակել և ներկայացրել ենք բանավոր խոսքում ունեցած դժվարությունների հաղթահարմանը միտված մեթոդական հնարներ:

Ուսումնասիրության առարկան՝

Մեր ուսումնասիրության առարկան տարրական դասարանում սովորողների կապակցված խոսքի զարգացման դժվարություններն են և դրանց հաղթահարմանը միտված գործունեության ձևերը:

Ուսումնասիրության օբյեկտը՝

Ուսումնասիրության օբյեկտը Դաշտավանի գ.Տոնոյանի անվան միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում իրականացվող մայրենիի դասն է:

Ուսումնասիրության տեսական և գործնական նշանակություն՝

- Մշակել ենք կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի դժվարությունների հաղթահարմանը միտված մեթոդական ցուցումներ:
- Մեր մշակած մեթոդական ցուցումները կարող են կիրառել ուսանողները, իրենց մանկավարժական պրակտիկաների ընթացքում:

Ուսումնասիրության մեթոդները՝

1. Մասնագիտական գրականության, գիտական կրթական չափորոշիչների, մայրենիի դասագրքերի ուսումնասիրության և արդյունքների քննարկում:
2. Դասալսումներ և արդյուքների վերլուծություն:
3. Զրույց աշակերտների հետ:

Հետազոտական բազա՝

- Հետազոտությունն իրականացրել ենք Դաշտավանի Գ.Տոնոյանի անվան միջնակարգ դպրոցում:

ԳԼՈՒԽ 1

Տեսական գրականության վերլուծություն

Հանրակրթական պետական կրթակարգում,ինչպես նաև մայրենիի տարրական դասարանների ծրագրում խոսքի զարգացման խնդիրներին կարևոր տեղ է հատկացվում:Ըստ նշված փաստաթղթերի՝ կրտսեր դպրոցականները պիտի գիտակցորեն (հասկանալով) կարողանան կառուցել խոսքային տեքստեր՝ համաձայն հաղորդակցության խնդիրների (ինչպես բանավոր,այնպես էլ գրավոր):

Խոսքը լեզվի կիրառությունն է գործնականում: Խոսք է ուսումնական նյութի շուրջ աշակերտի պատասխանը,և՛ նրա շարադրությունը,և՛ առօրյա զրույցը,և՛ արտասանած բանաստեղծական քառյակը, և՛ տեղեկանքը, և՛ գիտական զեկուցումը և այլն: Լեզվի ամեն մի դրսևորումը, այսինքն՝ բանավոր կամ գրավոր յուրաքանչյուր արտահայտությունխոսք է: Խոսքի դրսևորումները բազմազան են՝ պայմանավորված կյանքի բնագավառներիբնույթով:
Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ 6 տարեկան հայ երեխայի ակտիվ բառապաշարում հաշվվում է 2920 բառ:Այս քանակը ցույց է տալիս, թե ինչպիսի բառեր ու հասկացություններ է իր ակտիվ խոսքում գործածում դպրոց ընդունվող երեխան:Քիչ կրկնվող բառերը, բնականաբար, ավելի ուշ են մտնում երեխայի ակտիվ բառապաշարի մեջ, իսկ հաճախ չկրկնվող բառերը նվազում են կամ դուրս գալիս: Կրտսեր դպոցականների խոսքի զարգացում ասելով՝ ենթադրվում է բառապաշարի հարստացում,կապակցված խոսքի զրգացում,տարբեր տեսակի տեքստեր կառուցելու (բանավոր և գրավոր, ինչպես նաև նկարագրական, պատմողական, դատողական) կարողության ձևավորում: Այս իմաստով, տարրական դպրոցի նպատակն է ողջ ուսումնական նյութի յուրացումը ծառայեցնել բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը: Ուսումնական կարողություններ ձեռք բերելու համար կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան, աննկատելի կերպով հազարավոր բառեր,արտահայտություններ է սովորում, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց:

Մայրենիի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների խոսքի զարգացումը կարևոր խնդիր է: Տրամաբանորեն ճիշտ կառուցված հիմնավորումներով և դիպուկ բառերով ու

քերականական կանոններին համապատասխան խոսք կառուցելու աշակերտի կարողությունը նրա մտավոր զարգացման մակարդակի ցուցանիշն է:

Հայտնի է, որ խոսքը ծագում է արտահայտվելու պահանջից՝կարիքից:Ճիշտ նախադասություններ կառուցելու,բառեր բաց չթողնելու, բառերը տրամաբանական հաջորդականությամբ գործածելու, իրար հետ ճիշտ համաձայնեցնելու, և այդ ամենը գրավոր կամ բանավոր գրական շեշտով, ուղղախոսության կանոնների համաձայն արտաբերելու աշակերտների կարողությունների ձևավորումն ու զարգացումն ուսուցչի խնդիրն է:

Կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորման գործընթացի արդյունավետությունը մասնավորապես պայմանավորված է նրա ստեղծագործական բնույթով.որքան շատ ստեղծագործական աշխատանք կատարվի դասի ժամանակ,այնքան գործընթացը հետաքրքիր կլինի և արդյունավետ:

Մանուկների համար տեքստ կառուցելը ստեղծագործական բարդ աշխատանք է,որի ժամանակ աշակերտը դրսևորում է իր անհատական հակումները,հետաքրքրությունները ճաշակը,ազատություն է տալիս իր երևակայությանը:

Խոսքի զրգացման աշխատանքները հիմնականում իրականացվում են փոխադրությունների և թելադրությունների միջոցով:Որպես հետևանք՝ կրտսեր դպրոցականների բառապաշարն աղքատիկ է,թույլ է զարգացած սեփական մտքերը ձևակերպելու գործընթացի նկատմամաբ քննադատական-վերլուծական վերաբերմունքը,աշակերտները չեն կարողանում ճիշտ բաշխել ուշադրությունն իրենց պատումների և մտքերի խոսքային ձևակերպումների միջև:

Այսօր նվազել է երեխաների հետաքրքրությունը գեղարվեստական խոսքի նկատմամբ:Այդ հետաքրքրությունն ու ընթերցանությունը նախկինում դրկանորեն են ազդում սովորողների խոսքի զարգացման մակարդակի բարձրացման վրա:Համացանցն ու բջջային կարճ հաղորդագրությունները բացասաբար են ազդում դպրոցականների խոսքի վրա ընդհանրապես,ոճի վրա՝ մասնավորապես: Սկսած մանկական տարիներից՝փոքրիկները դժվարանում են կառուցել պատմողական,դատողական,մասնավորապես՝ նկարագրական խոսք: Արդյունքում նրանք դառնում են չհաղորդակցվող,չհասկացվող:

Այսպիսով ծագում է նշված դժվարությունները հաղթահարելուն միտված ծրագրային պահանջների ու անձի զարգացման խնդիրների միջև գոյություն ունեցող հակասությունները լուծելու անհրաժեշտություն:

1.1 ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մայրենիի ուսուցման մեթոդիկայում ներկայացված են այն մանկավարժական հիմնական պայմանները, որոնք անհրաժեշտ է ապահովել սովորողի խոսքային գործունեության ժամանակ: Դրանք հետևյալներն են.

1. **Խոսելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն՝** այսինքն՝ խոսելու պահանջմունք:/Մարդը խոսում է, երբ խոսելու կարիք ունի. երբ աշակերտը խոսում է, պատմում, կարիք չկա նրան սաստել կամ ընդհատել/:
2. **Խոսելու նյութի առկայություն.** խոսքը կառուցելուց առաջ, պետք է սովորողն ունենա տեղեկություններ նյութի մասին: /Նկատի ունենալ, թե որքանով է հետաքրքիր և ուշագրավ, իսկ փաստերը՝ արժեքավոր և հիմնավոր/:
3. **Խոսքի ընդունված կանոններով աշակերտներին զինելը,** երեխաներին տալ խոսքի օրինակելի նմուշներ: / Խոսքի օրինակելի նմուշները երեխաները ստանում են ընտանիքում, դպրոցում, գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են, ունկնդրում/:
4. **Հասկանալ այն ամենը**, ինչի մասին խոսվում է, ընկալել խոսքի տրամաբանությունը:/ Առանց խոսելու նյութի հասկացման, հնարավոր չէ բովանդակային խոսք կառուցել/:
5. **Տարբերել գործող անձերի տրամադրությունը** և այն ներկայացնել ինչպես ձայնային, այնպես էլ լեզվական արտահայտչամիջոցներով:
6. **Ապահովել կապը ունկնդրի հետ.**/խոսելիս հետևել արդյոք մարդիկ քեզ լսո՞ւմ են, հասկանու՞մ, հետաքրքիր՞ է, չե՞ն ձանձրանում, ընտրել համապատասխան բառապաշար, խոսել պարզ լեզվով/:

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում մենք ձգտում ենք ոչ միայնմշտապես ապահովել այս մանկավարժական պայմանները, այլև հետամուտ լինել աշակերտների կողմից դրանցից յուրաքանչյուրի իմացությանն ու կիրառմանը:

Մեր տարիների փորձով համոզվել ենք, որ աշակերտների բանավոր խոսքն արտացոլում է նրանց ներաշխարհը, մտքերը, անհանգստությունները, հոգեբանությունը: Սա մենք համարում ենք չափազանց կարևոր և մայրենիի դասերի ընթացքում փորձում ենք ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, այնպիսի հուզական մթնոլորտ, որոնք կնպաստեն ազատ, անկաշկանդ հարաբերությունների, խոսելու, պատմելու, արտահայտվելու սովորողների պահանջմունքների դրսևորմանը

Կապակցված խոսք կառուցելու կրտսեր դպրոցականների հմտության ձևավորման աշխատանքների համալիրի մեջ ամփոփվում է բառապաշարի ու քերականության տարրերի համատեղ կիրառումը: Բառապաշարը տալիս է խոսքի շինանյութը, քերականությունը՝ կառուցման օրինաչափություններն ու կանոնները, իսկ խոսք կառուցելու ունակությունն այդ երկուսը միավորելու, դրանցից նոր որակի խոսք ստանալու կարողությունը: Այս մոտեցումը անառարկելի է, որովհետև կապակցված խոսք կառուցելու հմտության ձևավորմանը օգնում է հարուստ և կայուն բառապաշարը, որի շնորհիվ աշակերտը կարողանում է հստակ և ստույգ ձևակերպել իր մտքերը:

Մենք միաժամանակ համոզվեցինք, որ աշակերտների բառապաշարի հարստացման գործընթացի վրա ազդում են և՛ դրական, և՛ բացասական ազդակները: Այդ իսկ պատճառով մենք ձգտում ենք ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել,որ ազդեցությունն առավելապես լինի դրական՝ խոսքը զերծ լինի բարբառներից և օտարաբանությունից:

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները մենք մշտապես իրականացնում ենք նկարների դիտարկման, այլ օբյեկտների ցուցադրման, զրույցի, գեղարվեստական տեքստերի ընթերցանության, բեմադրությունների, երկխոսությունների, բանավեճերի, իրադրային խաղերի ճանապարհով՝ հաշվի առնելով բազմաթիվ և բազմաբնույթ գործոններ. հակառակդեպքում իրականացրած յուրաքանչյուր խոսքային գործունեություն կարող է դառնալ աննպատակ:

1.2 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացվածության մակարդակների շուրջ տարվող ուսումնասիրությունները խարսխվում են մանկավարժական գրականության մեջ սահմանազատված մարդու խոսքի զարգացման փուլերի վրա: Այդ փուլերը թեև տարբեր հեղինակներ ներկայացրել են այլազան դիրքորոշումներով,սակայն ամբողջության մեջ՝բոլորն էլ սահմանում են հետևյալ կերպ.

1. մանկական տարիք (մինչև 1 տարեկան)՝ գեղգեղանք և թոթովանք
2. մսուրային տարիք (մինչև 3 տարեկան) բառի հնչյունային և վանկային կառուցվածքի,նախադասության բառերի մեջ գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային խոսք)
3. նախադպրոցական տարիք (3-ից մինչև 6 տարեկան)՝մենախոսության և ենթատեքստային խոսքի,պարզ ներքին խոսքի դրսևորում,
4. կրտսեր դպրոցականի տարիք (6-ից մինչև 10 տարեկան)՝խոսքային ձևերի ըմբռնում(բառի հնչյունային կազմ,բառապաշար,խոսքի քերականական կառուցվածք),գրավոր և բանավոր խոսքի,նրանց մատչելի նորմերի տիրապետում,մենախոսելու կարողության բուռն զարգացում,
5. միջին դպրոցական՝դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝խոսի գրական

նորմերի,ոճի ըստ ամենայնի տիրապետում,անհատական ոճի ձևավորում,

6. ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք(15-ից մինչև 17 տարեկան),խոսքի մշակույթի կատարելագործում,լեզվի առանձնահատկությունների տիրապետում,անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում[2 էջ 278]

Այս բաժանման սանդղակով պայմանավորված էլ ներկայացվում են խոսքի զարգացման մակարդակներ,որոնք սահմանվում են հիմք ընդունելով տարբեր մոտեցումներ:

Մ.Ռ.Լվովը սովորողների խոսքի զարգացմանը վերաբերող իր աշխատության մեջ նշում է խոսքի զարգացման չորս մակարդակ՝ առոգանություն,բառապաշար, քերականություն և տեքս:

Առոգանության մակարդակի ապահովման աշխատանքի ուղղություններն են՝

- աշխատանք խոսքի տեխնիկայի շուրջ
- սովորողների առոգանության կարողությունների կատարելագործում:

Խոսքի այս մակարդակի շուրջ տարվող աշխատանքներն սկսվում են դեռևս նախադպրոցական տարիքից, երբ երեխան սկսում է արտասանել փոքրիկ բանաստեղծություններ,վերարտադրել ունկնդրած պատմություններն ու հեքիաթները: Հետագայում այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են կրտսեր դպրոցում՝ մայրենիի դասերի և արտադասարանային աշխատանքների ժամանակ՝մասնավորապես հանդեսների նախապատրաստվելիս: Սա խոսքի բավականին բարձր մակարդակ է,որը ձևավորվում է աստիճանաբար:

Խոսքի զարգացման **բառապաշարային համակարգը** ենթադրում է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացում,հստակեցում և ակտիվացում:

Հայտնի է,որ մարդու բառապաշարը լինում է՝ **ակտիվ և պասիվ**: Ակտիվ եմ բառապաշարի այն բառերը,որոնք առօրյայում հաճախ են գործածվում,դրանց իմաստը հասկանալի է տվյալ լեզվով բոլոր խոսողներին: Այդ խմբի բառերը երբեք չեն ծերանում: Պասիվ բառապաշար են կազմում տվյալ լեզուն հասկացող բոլոր նաձանց համար հասկանալի, սակայն հաղորդակցման ընթացքում քիչ գործածվող բառերը:Պասիվ բառապաշարի բառերը կա՛մ արդեն հնացած են,կա՛մ էլ հնացման ենթակա են,սակայն մնում են լեզվի բառարանային կազմում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս,որ մարդու լեզվական գործունեության ընթացքում ակտիվ բառապաշարը լրացվում թ պասիվ բառապաշարի բառերով:Նախ մենք սովորում ենք հասկանալ ինչ-որ անծանոթ բառի իմաստը, և հետագայում նոր ինքներս այդ բառը գործածում ենք՝ակտիվացնում:

Կրտսեր դպրոցականների ակտիվ բառապաշարը հարուստ չէ.նրանք հաճախ բառերը գործածում են ոչ տեղին և խոսում են պարզ նախադասություններով:Ավելի մեծ տարիքում երեխաներն այնքան շատ են գործածում խոսակցական լեզուն,որ նույնիսկ շարադրություն գրելիս չեն կարողանում մտքերը գրական լեզվով արտահայտել:Այս մակարդակում կատարվող բազմաբնույթ

աշխատանքները նպաստում են,որ կրտսեր դպրոցականների խոսքը հարստանա,որ աշակերտներն սկսեն բառերի տարբեր նշանակությունները հասկանալ և կարողանան նոր սովորած բառերը գործածել խոսքում:

Բառապաշարի հարստացումն ու ակտիվացումը նույնպես սկսվում է վաղ մանկության տարիներին՝ ինչպես բնականոն (ընդօրինակման) այնպես էլ հատուկ կազմակերպված (ծրագրավորված) ճանապարհներով:

Ծրագրավորված ճանապարհով բառապաշարի հարստացումն ու ակտիվացումն իրականացվում է I-IV դասարաններում դասավանդվող բոլոր առարկաների,մասնավորապես մայրենիի դասերի ժամանակ:Այս տարիներին սովորողների բառապաշարը հարստանում է այն բոլոր բառախմբերով,որոնք անհրաժեշտ են նրանց ձեռք բերած տեղեկատվության շուրջ ավարտուն և բովանդակալից խոսք կառուցելու համար:

Քերականական մակարդակը ենթադրում է քերականորեն ճիշտ խոսքի կառուցում: Դրան կարելի է հասնել բառակապակցություններ և տարբեր կառուցվածքի նախադասություններ կառուցելու և գործածելու ուղղությամբ տարվող վարժությունների շնորհիվ: Քերականական կանոններին համապատասխան խոսք կառուցելու կարողության բարձր մակարդակին, անշուշտ , կրտսեր դպրոցականը հասնում է ավելի ուշ: Սա նշանակում է,որ նրա խոսքը քերականության կանոններին համապատասխան չի կառուցվում: Առանց մեր լեզվի քերականական կանոնների յուրացման՝ դպրոց ընդունված փոքրիկները խոսում են հիմնականում քերականորեն ճիշտ կառուցված նախադասություններով՝ երբեմն թույլ տալով այնպիսի լեզվական վրիպումներ, որոնց հիմքում ընկած են շարահյուսական և ձևաբանական այն կանոնները, որնք նրանք դեռևս չեն ուումնասիրել:

Այդպիդսի սխալների թվին են պատկանում անձական դերանունների հոլովերի, բայի ժամանակի, գոյականի հոլովների կառուցվածքի, ենթակայի և ստորոգյալ դեմքով և թվով համաձայնության պահանջի չիամացությունը և այլն:

Այսպիսով, խոսսքի քերականական բարձր մակարդակն ապահովում է աստիճանաբար և ոչ միայն ընդօրինակման ճանապարհով:

Չորրորդ մակարդակը **բնագրային** (տեքստային) խոսքն է: Այս մակարդակին աշակերտները հասնում են տեքստ կառուցելու կարողության ձևավորման շուրջ տարվող տարբեր վարժությունների միջոցով.պատմում, ելույթ, ստեղծագործում,փոխադրություն, շարադրություն: Տեքստային կամ բնագրային մակարդակով խոսքւ ենթադրում է մկ մտքի շուրջ (որը կարելի վերնագրել) տրամաբանորեն իրար լրացնող նախադասություններով խոսք կառուցելու աշակերտների կարողութուն: Այս կարողությունը ձևավորվում է մի քանի՝ իրար հետ սերտորեն շաղկապված փուլով.

- նկարի շուրջ պատմություն հյուսելու կարողության ձևավորում,
- կարդացած բնագրին հարազատ պատմելու ունակության ձևավորում,
- կարդացածի, տեսածի, լսածի մասին նախապես մշակված պլանի օգնությամբ պատմելու կարողության ձևավորում(բանավոր շարադրություն),
- որևէ ծանոթ թեմայի (նյութի) շուրջ կապակցված խոսք կառուցելու կարողության զարգացում,
- տրված վերնագով ամփոփ միտք կառուցելու տարրական կարողության ձևավորում:

Այս կապակցությամբ պիտի կարևորել «տեքստ» հասկացության մեկնաբանություն. տեքստու նախադասությունների պատահական հավաքածուներից (խմբերից) տարբերվում է իր հիմնական իմաստով՝ գաղափարով: Տեքստն ապահովում է մտքի զարգացումը. յուրաքանչյուր հաջորդ նախադասություն նախորդին ավելացնում է մի նոր միտք:

1.3 ԽՈՍՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Տարրական դասարաններում աշակերտների բանավոր խոսքին հիմնականում առաջադրվում են հետևյալ պահանջները. **բովանդակությունը, ճշգրտությունը, տրամաբանությունը, հարստությունը, արտահայտչականությունը, ճշտությունը**:

Խոսքը բովանդակային է, եթե խոսողը կամ գրողը իրենց խոսացածի ու գրածի մասին ունեն որոշակի գիտելիքներ, տեղեկույթ և դրանք ներկայացնում են ճշգրտորեն, տեղին և լիարժեք կերպով՝ խոսքը կառուցելով ոչ միայն փաստերի այլև ջևակերպելով ավարտուն և ամբողջական:

Խոսքի ճշտությունը խոսքի որակն է, որն ապահովում է համապատասխան քերականական, ուղղագրական և բառակազմական կանոնների պահպանմամբ:

Խոսքի ճշտությունը հիմնարար որակ է, այն խոսքը ապահովում է արտահայտչականությամբ, հարստությամբ և տրամաբանությամբ: Բացի ճիշտ լինելուց խոսքը նաև պիտի հստակ, մաքուր, պարզ, տրամաբանական, հարուստ, արտահայտիչ և տեղին: Այս որակներն ապահովում են խոսքի արդյունավետությունը և բնութագրում խոսքի լեզվական մշակույթի մակարդակը:

Ճշգրտությունը խոսքի հաղորդական որակ է, այն ապահովում է խոսողի հաղորդած մտքի համապատասխանությունն իրականությանը: Որպեսզի խոսքը լինի հստակ, պիտի բառերը ճիշտ գործածել , դիպուկ հոմանիշներ ընտրել, նկատի ունենալ բազմիմաստ և համանուն բառերի առկայությունն ու քերականորեն ճիշտ համակցել գործածվող բոլոր բառերը:

Խոսքի հասրտությունը բառապաշարային, քերականական ոճային այն միջոցների աբողջությունն է, որը համապատասխան իրադրության մեջ գործածում է յուրաքանչյուր ոք: Խքսի հարստությունը որոշվում է միևնույն միտքը տարբեր միջոցներով արտահայտելու խոսողի

ունակությամբ: Խոսքի հարստությունը պայմանավորված է միտքն արտահայտելու համար ընտրված խոսակցական միջոցների,հոմանիշների, լեզվական արտահայտչամիջոցների, տեքս կառուցելու մեթոդների զանազանությամբ: Այս որակն ապահովելու համար անհրաժեշտ է աշակերտների բառապաշարը հարստացնել մասնավորապես գրականության ընթերցման ճաանապարհով՝ ուշադրություն դարձնելով կարդացած տեքստերի քերականական և ոճային առանձնահակություններին, լուրջ խորհելով բառերի նշանակությունների նրբերանգների շուրջ, նկատելով և շտկելով նրանց թույլ տված խոսքային սխալները:

Խոսքի արտահայտչականությունը խոսողի գործածած մտքերի տրամաբանական հարաբերակցությունն է իրար նկատմամբ: Խոսքի տրամաբանությունը կարելի է ապահովել՝ ուշադիր վերաբերելով ողջ տեքստին, մտքերի կապակցվածությանը և ընտրված գաղափարին: Որպեսզի աշակերտներն զգան խոսքում առկա տրամաբանական սխալները, կարելի է նրանց առաջարկել գտնել և շտկել պատրատսի տեքստում կանխամտածված թույլ տված սխալները: Բանավոր խոսքում անհրաժեշտ է հիշել արդեն ասվածը և փորձել միտքը հաջորդաբար շտկել ու զարգացնել:

Խոսքի պարզությունը նրա մատչելիությունն է ունկնդրի կամ ընթերցողի համար. այն խոսքի որակ է որն ապահովում է նույնիսկ բարդ բովանդակությամբ տեքստի ընկալումը և հասկացումը:

Ելնելով սովորողների տարիքային առանձնահատկություններից՝ կարելի է պնդել, որ կրտսեր դպրոցականներն ավելի թույլ են տիրապետում գրավոր մենախոսական խոսքին: Ունենալով զարգացած մենախոսական խոսք կառուցելու՝ նրանք կկարողանան կարդացածի շուրջ տրված հարցերին ավելի մանրամասնորեն պատասխանել և սեփական մտքերը տրամաբանորեն արտահայտել:

Ջ.Գյուլամիրյանն իբրև խոսքի որակական նշում է նաև **խոսքի պարզությունը**.«խառնաշփոթությունը, նախադասությունների շարահյուսական ծայրահեղ բարդությունը, խոսքի ծանրաբեռնումը մեջբերումներով, անվանումներով, անհարկի հոմանիշներով , ավելորդ մանրամասներով, «պաճուճանքով» այն դարձնում են խրթին, անհասկանալի, ունկնդրման համար՝ տհաճ: Խոսքն իր կառուցվածքով պետք է լինի հաղորդակցության համար նպատակահարմար, համապատասխանի խոսքին իրադրությունների, նպատակի և լրատվության փոխանակման պայմաններին»:

1.4 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

Մեթոդական գրականության մեջ նշվում է, որ մայրենիի դասերի ժամանակ կրտսեր դպրոցականների խոսքը հիմնականում կարելի է զարգացնել կիրառելով՝ **ընդօրինակման**, **հաղորդակցման** և **կառուցողական** մեթոդները:

Ուսուցչի՝ աշակերտների հետ տարվող աշխատանքների ընթացքում այս մեթոդները զուգակցվում են, մեկը մյուսին լրացնում միատեղ ստեղծելով կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման գործընթացի համար բարենպաստ հնարավորություն, սերտորեն կապելով մայրենիի դասընթացը և աշակերտների ծոսքային գործունեությունը:

Ընդօրինակման կամ «նմուշ-օրինակի» դիտարկման մեթոդների համակարգում իրենց տեղն ունեն օրինակելի տեքստերի վերլուծությունները, սեփական խոսքի լեզվական կառուցվածքի համադրությունները, որոնողական գործունեությունը՝ բառերի և այլ լեզվական միջոցների ընտրությունը, նմուշ-օրինակների հիման վրա նախադասությունների ու տեքստի կազմումը, յուրացրած կանոնների ընդհանրացումը, ստեղծագործական աշխատանքները՝ պատմվածքի հյուսում,գրավոր փոխադրություններ՝ ստեղծագործական տեսակներով, բեմադրություններ, գեղարվեստական ընթերցումներ՝ նմանակումներով ու այլ աշխատանքներ: Այս մեթոդներով կարելի է խոսք կառուցել, սովորեցնել՝ կիրառելով զանազան եղանակներ և ձևեր: Օրինակ՝ կարդացածը վերարտադրել՝ փոխադրություն գրելու տարբեր ձևերով.տեքստի լեզվական վերլուծությամբ, նկարազարդումով, ժանրի փոփոխությամբ: Այս մեթոդների խմբի մեջ են մտնում նաև տարաբնույթ վարժություններ. նախադասությունների կամ տեքստի կազմում ըստ տրված օրինակի, առոգանության, արտասանության, դադարների, շեշտերի վերամշակում ըստ ուսուցչի տված նմուշի և այլն:

Կրտսեր դպրոցում ընդօրինակման մեթոդով աշխատելը շատ հարմար է և արդյունավետ, սակայն բավարար չէ. այն աշակերտներին միայն պատրաստում խոսքի զարգացման այլ մեթոդների կիրառման համար:

Հաղորդակցական մեթոդների հիմքը լեզվական գործունեության տեսությունն է, մասնավորապես խոսքի վերլուծությունը. այդ մեթոդների կիրառման ժամանակ հաշվի են առնվում վերլուծության բոլոր ձևերը՝ և՛ իրադրությունայինը, և՛ դրդապատճառայինը, և՛ զրուցակցի ընկալումը, և՛ հետադարձ կապը: Հաղորդակցման մեթոդներն ունեն սովորեցնելու իրենց ձևերը և միջոցները. առաջադրանքի ամբողջություն, դերային խաղեր, էքսկուրսիաներ, արշավներ, տարբեր աշխատանքներ, նկարների դիտումներ, հատուկ կազմակերպված ուսումնասիրություններ, երեխաների մեջ տպավորություններ և նյութեր կուտակելու այլ միջոցներ: Այսինքն, գործունեության ձևեր, որոնք աշակերտների մեջ առաջացնում են տարբեր ձևերով արտահայտվելու պահանջմունք՝ կարիք նկարելու, բանաստեղծություններ, պատմություններ և հեքիաթներ հյուսելու, օրագրեր վարելու ցանկություն և այլն:

Հաղորդակցման մեթոդը ենթադրում է սովորողների որոշակի կարողությունների համակարգ, որն իրականացվում է գրավոր և բանավոր տարբեր առաջադրանքների ընթացքում: Այդ համակարգի մեջ մտնում են յոթ տիպի կարողություններ, որոնք ճիշտ հաջորդականությամբ կիրառելու շնորհիվ ստեղծում են մեթոդիկան.

- կարողություններ, որոնք կապված են շարադրվող թեմայի, այն հասկանալու, սահմանները որոշելու, թեմաները բացահայտելու և ենթակարգելու հետ,
- սեփական շարադրանքը նախապես որոշված հիմնական մտքին ենթարկելու կարողություն՝ արտահայտելու սեփական միտքը, դիրքորոշումը, հույզերը, վերաբերմունքն անհատների ու նրանց վարքի նկատմամաբ և այլն,
- անհրաժեշտ նյութ կուտակելու, հավաքելու, գլխավորը և երկրորդականը տարբերելու կարողություններ,
- հավաքած նյութը համակարգելու, այն շարադրվելիք բնագրի մեջ զետեղելու, խեսքի պլանը կազմելու կարողություններ,
- թեմային համապատասխան բառարանների պատրաստում, բառերի, բառակապակցությունների, դարձվածքների, կերպարների ընտրություն և այլն,
- տեքստ կառուցելու կարողություն. բանավոր խոսքում՝ ստեղծագործելու, գրավոր խոսքում ՝առանց սխալների ստեղծածը գրառելու, պարբերություններն առանձնացնելու ունակություններ,
- գրածը կատարելագործելու, խմբագրելու, կետադրությունը և ուղղագրությունը ստուգելու կարողություններ:

Կառուցողական մեթոդը համադրական մեթոդ է: Այն սերտորեն առնչվում է առաջին երկու մեթոդներին: Այս մեթոդով աշխատելիս պրակտիկայում կիրառվում են բազմաթիվ վարժություններ, որոնցից շատերն ունեն նախապատրաստական և օժանդակող դեր: Այդ վարժությունների խմբի մեջ են մտնում բառային աշխատանքը, բառակապակցությունների, նախադասությունների շուրջ տարվող աշխատանքները, տրամաբանական առաջադրանքները(աշխատանք հասկացությունների և նրանց սահմանումների շուրջ, առարկաների բնության երևույթների առանձնահատկությունների համեմատում), աշխատանք տեքստի շուրջ, տարբեր տիպի տեքստերի կազմում:

Ջ. Գյուլամիրյանը նշում է նաև խոսքի զարգացման աշակերտակենտրոն մեթոդներ, որոնք կիրառման ժամանակ սովորողները խոսք կաառուցելու գործընթացում դրսևորում են ակտիվ մասնակցություն: Այդ մեթոդներից են դերային խաղերը, դասարանային շրջանը, բանավեճերը, փոքր խմբերով աշխատանքը, «Նճանկարը», «Նուռը» և այլն:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2.1 ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Մեր աշխատանքային փորձով համոզվել ենք, որ կրտսեր դպրոցականի թե՛ բառապաշարի, թե՛ կապակցված խոսքի զարգացման գործընթացում առաջատար դեր ունի ընթերցանությունը. ընթերցանությունը անձի մտածողության և մտավոր զարգացման աղբյուրներից է: Ինչպես նշել է նշանավոր մանկավարժ Սուխոմլինսկին՝

«Ընթերցանությունը մի շավիղ է, որը տանում է մտավոր, բարոյական, գեղագիտական զարգացման գագաթը»: Նրա կարծիքով՝ «Կարդում է միայն այն աշակերտը, որի գիտակցության մեջ բառը խաղում է, թրթռում, երփներանգվում շրջապատող աշխարհի գույներով ու մեղեդիներով»:

Ցավոք, այսօր գեղարվեստական խոսքի նկատմամբ սերնդի հետաքրքրությունը նվազել է: Երեխաները քիչ են կարդում. հատկապես կրտսեր դպրոցականների համար կարդալու հիմնական միջոցը դասագիրքն է: Տեխնիկապես հագեցած մեր դարում՝ հեռուստացույց, համակարգիչ, բջջային հեռախոս և ժամանակակից ՏՏ միջոցները բացասաբար են ազդում դպրոցականների լեզվամտածողության, բառապաշարի խոսքի վրա:Արդյունքում նրանք դառնում են ոչ միայն չհաղորդակցվող, այլև՝ չհասկացվող:

Կրտսեր դպրոցականները հիմնականում կարողանում են ճիշտ կարդալ, բացատրել իրենց կարդացածի իմաստը:Սակայն բավարարվել այսքանով սխալ է: Կարևոր է, որ գիրք կարդալը նրանց համար դառնա հոգևոր սնունդ, ձևավորվի աշխարհաճանաչմանը կարդալով հասնելու պահանջմունք: Սկսած առաջին դասարանից՝ մենք կարևորում ենք արտադասարանային ընթերցանությունը, կարդացած ստեղծագործությունների դիպաշարի քննարկումը, կերպարների վերլուծությունը գաղափարների բացահայտումը ու ենթատեքստերի կռահումը, կարդացած ստեղծագործությունների բեմականացմանը, գրողների կեսագրության արժեքավոր դրվագների քննարկմանը, նրանց տուն-թանգարաններ այցելությանը և այլն: Այս ամենը մենք կազմակերպում ենք՝ նկատի ունենալով տարրական

դասարաններում մայրենիի դասավանդման հիմնական խնդիրները.

- ✓ սեր և հետաքրքրություն առաջացնել գեղարվեստական գրականության նկատմամբ,
- ✓ ընդլայնել աշակերտների ճանաչողության սահմանները, դաստիարակել ապագա մարդն ու քաղաքացին,
- ✓ զարգացնել աշակերտների տրամաբանական մտածողությունը, երեխաներին նպատակաուղղել խորհելու, ինքնուրույն դատողություններ անելու,

- ✓ աշխատանք տանել կարդացածը հասկանալու և վերարտադրելուկարողությունների մշակման ուղղությամբ,
- ✓ ընթերցանության բնագրերում եղած գեղեցիկ բառերն ու արտահայտությունները դարձնել աշակերտների սեփականությունը, զարգացնել խոսքը:

Գաղտնիք չէ, որ աշակերտների բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանքները հիմնականում իրականացվում են մայրենիի դասերի բոլոր փուլերում՝ և՛ նոր նյութ հաղորդելիս՝ ակտիվ զրույցների միջոցով, և՛ընթերցելիս ու պատմելիս, և՛բառային աշխատանքի ու բնագրերի շուրջ աշխատելիս: Մենք չափազանց կարևորումենք և վստահ ենք, որ այս հարցում կարևոր են հատկապես ինքնուրույն ընթերցանության դասերը, որոնց մեթոդապես ճիշտ կառուցումը սովորողների մեջ սեր և հետաքրքրություն է արթնացնում դեպի ընթերցանություն՝ գիրքը: Սկսած 2-րդ դասարանից՝ աշխատում ենք ինքնուրույն ընթերցանության դասերն այնպես կազմակերպել, որ աշակերտները սովորեն հասկանալով կարդալ, որ ընթերցանությունը հաճույք պատչառի նրանց, լինի հետաքրքիր, ուսուցանող, նրանց փոխանցի բարձրարժեք տեղեկություններ: Սկզբնական շրջանում երեխաների համար ընտրում ենք այնպիսի հեքիաթներ, որոնք նրանք կկարողանան կարդալ՝ առանց հոգնելու և ձանձրանալու:Աստիճանաբար աշակերտները ձեռք են բերում սահուն կարդալու տեխնիկա, հարուստ բառապաշար և ակնառու կերպով նկատում են իրենց ձեռքբերումները:

Ինքնուրույն ընթերցանության դասերին մենք կիրառում ենք խոսքի զարգացմանը նպաստող բազմաթիվ հնարներ, սակայն առավել արդյունավետ է կարդացած բնագրի շուրջ իրականացվող խոսքային ոգևորվածություն է առաջացնում աշակերտների շրջանում: Սովորաբար ընտրում ենք այնպիսի ստեղծագործություններ, որոնք համապատասխանում են նրանց տարիքին և զարգացնում են երևակայությունը:

Մենք չափազանց արդյունավետ ենք համարում հատկապես ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի դասերի իմաստավորման փուլում իրականացվող խոսքի զարգացմանը միտված աշխատանքները:

Մայրենիի դասերի ժամանակ նախատեսված բնագրի շուրջ իրականացվող աշխատանքի փուլում մենք իրականացնում ենք հետևյալ բնույթի առաջադրանքները.

- ✓ կարդացած ստեղծագործության նոր վերնագրի առաջադրում, հենակետային բառերի, կապակցությունների օգնությամբ նոր բովանդակությամբ տեքստի հյուսում,
- ✓ տրված ստեղծագործության հիմնական միտքի բացահայտում,

ենթատեքստերի կռահում, ստեղծագործության բաժանում առանձին պարբերությունների, յուրաքանչյուրի վերնագրում և ընդարձակում՝ հյուսելով նոր պատմություն

- ✓ որևէ խնդրի շուրջ երկխոսության մեջ մտնել բնագրի կերպարների հետ,

- ✓ երկխոսությունը ներկայացնել որպես մասնակից, որպես ականատես և այլն:

Որպեսզի այս աշխատանքներն իրոք նպաստեն կապակցված խոսքի զարգացմանը/ և ոչ թե առանձին մտքերի ձևավորմանը/, մենք աշակերտներին մղում ենք ընդարձակ, ավարտուն միտք կառուցելու, հյուսած մտքերում խոսքի տարբեր տեսակները կիրառելու, դրանք վերլուծելու և այլն: Նման գործունեության ընթացքում /թե՛ մենախոսության, թե՛ երկխոսության ժամանակ/ մենք աշակերտի խոսքը չենք ընդհատում, ինչպես նաև թույլ տված սխալները չենք ուղղում, հակառակ դեպքում՝ աշակերտները կսկսեն կաշկանդվել և չխոսել: Թույլ տված սխալները համակարգում ենք և դրանց շտկման ուղղությամբ հետագայում ենք աշխատում: Նման աշխատանքի արդյունքում դասարանում ստեղծվում է դրական մթնոլորտ, վստահություն և խոսելու կարիք, ձևավորվում է նաև հարգանք միմյանց նկատմամբ, լսելու ցանկություն և կարողություն: Արդյունքում հարստանում է սովորողների բառապաշարը, սովորում են նորածանոթ բառեր, որոնք գործածում են իրենց խոսքում, կարողանում են համարձակ արտահայտվել, լինել ուշադիր ունկնդիր,հարցեր տալ,արտահայտել սեփական միտքը և հասկանալ բովանդակության իմաստը:

Ընթերցանության շուրջ աշխատանքն առավել հետաքրքիր և ճանաչողական դարձնելու նպատակով իրականացնում ենք մի հնար, որը մեծ հետաքրքրություն ու ոգևորվածություն է առաջացնում աշակերտներ մեջ: Մեր դասարանի յուրաքանչյուր աշակերտ ունի ինքնուրույն ընթերցանության դասերի համար նախատեսված նոթատետր, որտեղ կատարում է նշումներ հետևյալ բովանդակությամբ.

- ✓ **տեղեկություն ստեղծագործության հեղինակի մասին**/ նոթատետրում փակցնել հեղինակի լուսանկարը և նշել ծննդավայրը, հայտնի ստեղծագործությունները/,
- ✓ **կարդացած ստեղծագործության վերնագիրը,**
- ✓ **ստեղծագործության գլխավոր կերպարները**/ բնութագրել կերպարներին, վերլուծելնրանց կատարած արաքները/,
- ✓ **նորածանոթ բառերը** /կազմել բառակապակցություններ, գործածել նախադասությունների մեջ/,
- ✓ **ներկայացնել դատողություններ** /պատասծանել «ի՞նչ սովորեցի» և «ինչու» հարցերին/**,**
- ✓ **նկարազարդել** / նկարել դուր եկած հատվածը, ինչպես նաև արտագրել/**:**

Մեր փորձը ցույց է տվել, որ կարդացած բնագրի շուրջ իրականացվող այսպիսի աշխատանքը նպաստավոր պայմաններ է ստեղծում ընթերցանության հանդեպ աշակերտների մեջ սեր արթնացնելու, ընթերցանության միջոցով նոր գիտելիքներ ձեռք բերելու և բառապաշարը հարստացնելու ուղղությամբ: Արդյունքում աշակերտները իրենց ձեռքով

ստեղծում են մի գրքույկ, որտեղ ամփոփված են տեղեկություններ իրենց կարդացած ստեղծագործությունների մասին:

Այսպիսով, կրտսեր դպրոցականների խոսքի զարգացումը երկարատև և շարունակական գործընթաց է: Այն սկսվում է դեռևս նախադպրոցական
տարիքից և հաճախ շարունակվում մարդու ողջ կյանքի ընթացքում: Սակայն այն ըստ էության տարրական դպրոցի կարևորագույն խնդիրներից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայրենիի լեզվի ուսուցման գործընթացում հիմնարար տեղ է տրվում կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը, քանի որ այդ գործընթացում զարգանում է նաև նրանց բարձրակարգ մտածողությունը, զգացմունքները, ձեռք են բերվում լիարժեք հաղորդակցական հմտություններ:

Սկսելով ուսումնասիրել գիտությունների հիմունքները՝ աշակերտները յուրացնում են նոր բառեր, տիրապետում են խոսքի ուսումնասիրման ոճը: Մենք պետք է աշակերտին տանք հասարակության լիարժեք անդամը դառնալու, այլոց հասկանալու և հասկանալի լինելու հնարավորություններ: Եվ որքան վաղ սկսվի խոսքի զարգացման գործընթացը, այնքան արագ կհասնենք ցանկալի արդյունքի: Սրա համար անհրաժեշտ է կրտսեր դպրոցականների բանավոր և գրավոր խոսքը ձևավորել ստեղծագործական գործունեության ճանապարհով:

Սկսած երկրորդ դասարանից՝ անհրաժեշտ է բծախնդրորեն աշխատել բառի , բառակապակցության նախադասության մասին աշակերտների ունեցած գիտելիքները կարողությունների վերածելու, կապակցված մտքեր կառուցելու ունակությունների ձևավորման ուղղությամբ, իրականացնել տեքստ կառուցելու գործընթացի նրբություններն ըմբռնել տալու աշխատանքներ:

Ուսումնասիրությունների արդյուքնում մենք եկանք հետևյալ եզրակացությունների.

1. Աշակերտի խոսքի զարգացումն ընթանում է նրա աձի զարգացմանը զուգահեռ:
2. Աշակերտների խոսքի զարգացման գործընթացը կառավարելի է և արդյունավետ, եթե այդ ուղղությամբ տարվում է համակարգված աշխատանք: Այդ ընթացքում անհրաժեշտ է, աշակերտներին տալ հաճախ խոսելու, արտահայտվելու հնարավորություն,
3. Ազատ և հաճախակի արտահայտվելու, խոսելու, կարծիք հայտնելու, դասընկերների առջև անկաշկանդ հանդես գալու համար դասարանում պետք է ստեղծել ապահով, վստահելի մթնոլորտ: Միայն այդ դեպքում ուսուցման զարգացնող հնարավորությունը կլինի արդյունավետ:
4. Նկատի ունենալով կրտսեր դպրոցական տարիքի ինքնատիպությունը և տասներկուամյա կրթությամբ պայմանավորված վաղ ուսուցման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է խոսքի զարգացման աշխատանքների ժամանակ մեծ տեղ տալ զննականության տարբեր միջոցներին և հնարներին, փոխգործուն մեթոդներին և դրանք գործածել արդյունավետ ու տեղին:
5. Տեքստերի (տարբեր տեսակի) շուրջ տարվող պարբերական համակցված աշխատանքը նպաստում է դպրոցականների բառապաշարի հարստացմանը, բարձրացնում նրանց խոսքի

մշակույթի մակարդակը, դաստիարակում է մայրենի լեզվի նկատմամբ գիտակցական վերաբերմունք, զարգացնում ստեղծագործական մտածողությունը, կատարելագործում է գրավոր և բանավոր խոսքը, նպաստում ինքնուրույնության զարգացմանը, ապահովում է կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման բարձր մակարդակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս.Գ. , Հայոց լեզու, Բառ և խոսք, «Լույս», Եր., 1978, 189 էջ :
2. Գյուլամիրյան Ջ. Հ. , Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Եր., 2018, 340 էջ :
3. Խարազյան Ռ.Փ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Աստղիկ, Եր., 2003, 128 էջ:
4. Կանեցյան Գ.Ռ , Երեխայի փորձառական ուսումնասիրություն, Եր., «Լույս», 1988 , 526 էջ :
5. Սուխոմլինսկի Վ.Ա. , Սիրտս նվիրում եմ երեխաներին, Եր., «Լույս», 1977, 318 էջ:
6. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա,«Լույս» Եր.,1980,562 էջ: